

Միթէ ո՞չ էք լուեալ զառակ Սուլթան Մուրատին . իր ի գնալն ի Պաղտատ երբեմն՝ բազումք բազում օրհնութիւնս տային, ոմն թէ Գլլըճըն քէսկին օլտուն, եւ ոմն թէ Տուշմէնըն ֆէթ օլտուն, եւ ոմն թէ Պէրմուրատ օլասըն, որոց ոչ իսկ հաճի սիրտ նորա : Եւ այն որ ասէ թէ Օմրուն չօղ օլայ, նմա պարգեւէ զողորմութիւն, քանզի զիտելով զբախտին իւրոյ զյաջողուած թէ Օմր ուզուեն օլտուքտէ՝ գլլըճըն քէսկինլիկի վէ տուշմէնըն ֆէթլիկի վէ պէրմուրատլիկի եւայլն ասանլիկի մուգարէր վէ մուքէրէր տըր : Վասն որոյ ըստ կարծեաց ձերոց չէ ինչ կոծ զի ոչ երկնչիմք անդ ուր ոչ իցէ երկիւղ, ըստ մարգարէին, Տեառն շնորհիւ . եւ այլ առաւել քան զոր յառաջն էր՝ ձեզ լիցի զիտելի : Այլ միայն հարկ ի վերայ կայ քո եւ հայցուածովքս մանաւանդ զի պնդեսցես զմէջս քո զօրութեամբ Սուրբ Հոգւոյն, ըստ այնմ՝ Զօրութիւն փառաց ընդ մէջ քո արկեալ, զօտի ի վերայ զօտոյ ածեալ, այսինքն զարդարելով զքեզ առաքինութեամբ եօթանց եւ մաքրութեամբ կուսականին յոր կոչեցարն ըստ առաքելոյ : Եւ երկրորդ՝ աստուածային տառից ուսմամբն ներկրթելով, որ կարօղն են զքեզ իմաստուն առնել . քանզի եթէ այսու ջանիւ քաջացիս<sup>1)</sup> ցանկ զի աշխարհի փարելի լիցիս հաճութեամբ, այսինքն գովիլ ի մարդկանէ ռաբբի կոչմամբ՝ համատարած համբաւուք տեսանելով եւ լսել զքո արտաբերական եւ ճոռոմական հոետորութեանդ հանճար, այս՛ եւ ես իսկ նովին ձայնիւ գոչեալ յուսամ եւ խնդրեմ իսկ ի Հոգւոյն Սրբոյ, մանաւանդ թէ պահանջեմ ի քէն ստանալ աղօթիւք եւ ճգամք ըստ Տեառն բանի թէ Որ հայցէ գտանէ : Այնքան եւ առաւել իսկ ողջախօհական առաքինութեամբ զինիլ եւ վառիլ եւ զարդա-

1) քաջացիս .